

**Ուսումնադաստիարակչական
աշխատանքների պլան
2022-2023 ուստարվա**

ՀՀ ԿԳՄՄՆ

**«Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ
դպրոց» ՊՈԱԿ-ի**

Նախարան

Նախորդ՝ 2021-2022 ուստարվա աշխատանքների վերլուծություն

Ուսումնադաստիարակչական մասով

Նախորդ ուստարում (2021-2022) դպրոցը տարեսկզբին ուներ 458 սովորող, տարեվերջին՝ 448:

2021-2022 ուստարում դպրոցում ձևավորվել է 19 դասարան՝ յոթ 10-րդ դասարաններ (հումանիտար հոսքում՝ 3 դասարան, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 2 տնտեսագիտական, 1 ֆիզմաթ և 1 բնագիտական դասարաններ), յոթ 11-րդ դասարաններ (հումանիտար հոսքում՝ 2 լեզվագիտական և 1 պատմագիտական դասարաններ, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 2 տնտեսագիտական, 1 ֆիզմաթ և 1 բնագիտական դասարաններ) և հինգ 12-րդ դասարաններ (հումանիտար հոսքում՝ 1 պատմագիտական և 1 լեզվագիտական դասարաններ, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 1 ֆիզմաթ, 1 տնտեսագիտական և 1 բնագիտական դասարաններ):

2021-2022 ուստարում ուսման առաջադիմությունը դպրոցում կազմել է 96%, որակը՝ 27%:

Գերազանցիկների թիվը 18 է, հարվածայիններինը՝ 103 :

2021-2022 ուստարում դպրոցը տվել է առանձին գործող ավագ դպրոցի շրջանավարտների տասներկուերորդ սերունդը՝ 129 շրջանավարտներ: Նրանցից բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել 95-ը (շրջանավարտների շուրջ 73.6 %-ը). նրանցից 13-ը սովորում է անվճար համակարգում (ընդունվածների 13.6 %-ը): 11 շրջանավարտներ պատրաստվում են մասնակցելու հեռակա ուսուցման քննություններին:

2021-2022 ուստարում մասնագիտացված կրթական աջակցությունների գծով իրականացված աշխատանքների մասով տվյալները՝ առանցքային ուղենիշները, դրանց կատարման հարցում ձեռքբերումներն ու բացթողումները հանգամանորեն ներկայացված են տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի տարեվերջյան հաշվետվության մեջ և արտացոլված են դպրոցի 2021-2022 ուստարվա ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տնօրենի հաշվետվության մեջ:

Սովորողների հետ դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Կազմակերպվել են դասարանական և դպրոցական ծնողական ժողովներ, սոցիալապես անապահով սովորողները ապահովվել են անվճար դասագրքերով, ծնողագուրկ և հատուկ կարիք ունեցող սովորողները եղել են մշտական հոգաձության ներքո: Կարգապահական, հոգեբանական կամ այլ դժվարություններ ունեցող սովորողների հետ տարվել է հատուկ աշխատանք (անհատական զրույցներ, խմբային քննարկումներ մանկավարժների, աշակերտական խորհրդի անդամների, առանձին դեպքերում՝ հանդիպումներ ծնողների հետ): Իրականացվել է ուսուցիչների և սովորողների հերթապահություն: Սովորողները ծանոթացել են անձնական հիգիենայի կանոններին, համավարակի ժամանակ անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոններին, դպրոցի ներքին կարգապահական կանոններին:

Շնորհալի սովորողների միջոցով կազմակերպվել են գեղարվեստական միջոցառումներ:

Դասղեկների աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր ամիս հրավիրվել է դասղեկների ժողով, քննարկվել և հաստատվել են ուստարվա ընթացքում նախատեսվող զրույցների, մշակութային օջախներ այցերի, հայրենագիտական ճամփորդությունների, մրցույթների պլանները՝ ըստ ամիսների, հաշվետվությունները կատարած աշխատանքների վերաբերյալ, որոնք հաստատվել են տնօրենի կողմից, քննարկվել և լուծում են ստացել սովորողների վարքագծում և ուսման առաջադիմության մեջ ծագած խնդիրները: Դասղեկի ժամերին անցկացվել են ուստարվա պլանով նախատեսված զրույցները:

Ընտանիքի և ծնողների հետ սերպ կապն ապահովվելու նպատակով հրավիրվել են ծնողական ժողովներ, կազմավորվել են դասարանների ծնողական խորհուրդները, կազմավորվել է դպրոցի ծնողական խորհուրդը, ապահովվել է դպրոց-ծնող կապը: Ծնողներն ընդգրկվել են ուսումնական և դաստիարակչական գործընթացներում՝ մասնակցելով մշակութային օջախներ այցելել, հայրենագիտական ճամփորդություններին, քննարկելով սովորողների առաջադիմության և կարգապահության հետ կապված խնդիրները:

Դպրոցի սովորողների ինքնավարության մարմնի ակտիվ գործունեությունը կազմակերպելու նպատակով կազմավորվել են դասարանական աշակերտական խորհուրդները, հրավիրվել է սովորողների ընդհանուր ժողով, կազմավորվել է դպրոցի աշակերտական խորհուրդը, կազմակերպվել է աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը, յուրաքանչյուր ամիս կայացել են աշակերտական խորհրդի նիստերը, աշխորհրդի անդամների կողմից առաջարկվել և իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք արտացոլվել են աշխորհրդի նախագահի հաշվետվության մեջ (դպրոցի ամանորյա ձևավորում, գեղ. միջոցառումներ, սպորտային միջոցառումներ, կլոր-սեղան քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ, խաղ թրեյնինգներ և այլն):

Ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ անցկացվել են թեմատիկ զրույցներ և քննարկումներ «Հայաստանի անկախության ճանապարհը», «Երևան, վարդագույն մայրաքաղաք», «Ճանաչենք մեր մայրաքաղաքը», «Թարգմանչաց տոն», «Խոսենք մաքուր հայերենով», «Ազգի պահպանման հիմնական գործոնները», «Ինչպե՞ս պահպանել ազգային դիմագիծը», «Հայոց փառապանծ բանակ», «Հայոց եկեղեցու նշանավոր տոները և նրանց նշանակությունը», «Հայկական ճարտարապետության նշանավոր կոթողները, հուշարձանները», «Գիրքը գիտելիքի հավերժ աղբյուր», «Հայոց ցեղասպանությունը մեկ դար անց, ինչո՞ւ են հիշողությունները կարևոր», «Ընտանիքն առողջ և համերաշխ հասարակության հիմքն է» և այլ թեմաներով: Կազմակերպվել են բաց դասեր, դասախոսություններ, շարադրությունների մրցույթներ, այցելություններ մշակութային օջախներ, հայրենագիտական ճամփորդություններ, ճանաչողական այցեր, բազմաբովանդակ թեմաներով սեմինարներ՝ գեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, առողջ ապրելակերպի, մասնագիտական կողմնորոշման և այլն:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ սովորողների համար ուսուցումը I կիսամյակում՝ 2 շաբաթ (04.10-15.10) և II կիսամյակում՝ 3 շաբաթ (03.02-13.02, 01.03-07.03) կազմակերպվել է հեռավար եղանակով: Այս ընթացքում օգտագործվել են Messenger և Zoom հարթակները: Հեռավար ուսուցումն ապահովելու համար դպրոցն ըստ անհրաժեշտության մանկավարժներին և սովորողներին ապահովել է համակարգիչներով: Կազմվել են հեռավար ուսուցման դասացուցակներ, սովորողները հեռավար եղանակով ապահովվել են դիդակտիկ նյութերով, անհատական հանձնարարություններով:

Նոր ուստարվա խնդիրները, զարգացման ուղիները, աշխատանքի կազմակերպման ուղղությունները

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան № 118 ավագ դպրոցը» 2009 թվականից սովորողների դաստիարակությունը, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացումը իրականացնում է ուսուցման կոլեկտիվ եղանակին բնորոշ մանկավարժական տեխնոլոգիաներով: Ուսուցման այս եղանակն ապահովում է սովորողների ներգրավվածությունը թե՛ ուսումնական գործընթացում, թե՛ կառավարման համակարգում: Ուսումնական խմբերը կազմվում են 20-30 սովորողներից, որոնք բաժանվում են հաստատուն կազմով ենթախմբերի՝ ջոկատների՝ (6-10 աշակերտ): Յուրաքանչյուր ջոկատ ունի իր ավագը: Ամեն ջոկատ մեկ շաբաթով դառնում է տվյալ ուսումնական խմբի (դասարանի) հերթապահ և ակտիվորեն մասնակցում ուսումնական պրոցեսի կազմակերպմանը: Ջոկատների ավագները դասղեկների հետ միասին կազմում են ավագների խորհուրդ: Յուրաքանչյուր օրվա վերջում ջոկատները կատարում են ռեֆլեքսիա, որը վարում է տվյալ ջոկատի ավագը: Այնուհետև ավագները ջոկատների քննարկումներն ու որոշումները ներկայացնում են ավագների խորհուրդ և հակառակը՝ ավագների քննարկումներն ու որոշումները ներկայացվում են ջոկատի անդամներին: Դասղեկները, որ ավագների խորհրդի անդամ են, սովորողների խնդիրները, ծրագրերը, քննարկումներն ու որոշումները ներկայացնում են փոխտնօրեններին ու տնօրենին: 2021-2022 ուստարում դպրոցում ուսումնասիրվել են հանրակրթության նոր պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների պահանջները, հայոց լեզվի և հայ գրականության, պատմության, հասարակագիտության և ՆՁՊ ուսուցիչները 2021թ. մասնակցել են ԿԾԿ ԾԻԳ-ի՝ նոր չափորոշիչներին նվիրված հնգամյա վերապատրաստումներին, այլ առարկաների ուսուցիչներ մասնակցել են պարտադիր ատեստավորման վերապատրաստումներին, և յուրաքանչյուր առարկայի մասնախումբ քննարկել է դպրոցում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների, դիդակտիկայի համապատասխանությունը նոր չափորոշիչներին, լրամշակվել է դիդակտիկան: Այսպիսով, ուսուցման ու դաստիարակության գործընթացը դպրոցում իրականացվում է համագործակցային այնպիսի եղանակով, որ ուսումնական գործընթացն ինքնին ձևավորում է սովորողի՝ հանրաքրթության պետական նոր չափորոշիչով սամանված կարողունակությունները:

2022-2023 ուստարում դպրոցում սովորում է 530 սովորող, ձևավորվել է 22 դասարան:

Դպրոցում ձևավորվել է երկու հոսք՝ հումանիտար (2 ենթահոսքով՝ լեզվագիտական և պատմագիտական) և բնագիտամաթեմատիկական (3 ենթահոսքով՝ ֆիզմաթ, բնագիտական, տնտեսագիտական):

Նոր ձևավորված 10-րդ դասարանները 8-ն են՝ հումանիտար հոսքում՝ 2 լեզվագիտական և 1 պատմագիտական դասարաններ, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 2 տնտեսագիտական, 2 ֆիզմաթ և 1 բնագիտական դասարաններ:

11-րդ դասարանները 7-ն են՝ հումանիտար հոսքում՝ 2 լեզվագիտական և 1 պատմագիտական դասարաններ, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 2 տնտեսագիտական, 1 ֆիզմաթ և 1 բնագիտական դասարաններ:

12-րդ դասարանները 7-ն են՝ հումանիտար հոսքում 1 պատմագիտական և 2 լեզվագիտական ենթահոսք, բնագիտամաթեմատիկական հոսքում 1 ֆիզմաթ, 2 տնտեսագիտական և 1 բնագիտական ենթահոսքեր:

2022-2023 ուստարվա աշխատանքային ծրագրերը կազմելիս դասղեկները հաշվի են առել դասարանի սովորողների առաջարկները: Դասղեկների և սովորողների ակտիվ քննարկումների արդյունքում միջոցառումներն ըստ բնույթի դասակարգելուց հետո կազմվել է օրացուցային պլան, որտեղ նշված են նախատեսված միջոցառումների նպատակը, իրականացման ձևերը, ժամկետները և այլն:

Դասղեկներին առաջարկվում են գրույցների թեմաներ («Աշակերտի տեսքը և պահվածքը դպրոցում և այլ հասարակական վայրերում», «Հետիոտնի և ուղևորի հիմնական պարտականությունները», «Անկախությունն ազգի ազատության արտահայտման ձև, բնականոն իրավունք», «44-օրյա պատերազմ, նորօրյա հերոսներ», «Սովորողների իրավունքներն ու պարտականությունները», «Բռնություն, բռնության տեսակները», «Առողջ սնունդ», «Ֆիզիկական ակտիվություն», «Սեռավարակներ, ի՞նչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը», «Վնասակար սովորույթները և դրանց հետևանքները», «Գնահատենք և պահպանենք մեր ազգային արժեքները», «Աշխարհի ամենաբարձր արվեստը՝ երաժշտություն, թատրոն», «Հայոց եկեղեցու նշանավոր

տոները և դրանց նշանակությունը», «Ժամանակակից տեղեկատվական միջոցների արդյունավետ օգտագործումը», «Անձի առանձնահատկությունը և մասնագիտության ընտրությունը» այլն)՝ դասղեկների ժամերին և ռեֆլեքսիաների ժամանակ քննարկումներ և բանավեճեր անցկացնելու համար, որի նպատակը դպրոցում դաստիարակության գործում ընդհանրական ծրագիր իրականացնելն է:

2022-2023 ուստարում ծրագրվում է աշխատանքներ կատարել հետևյալ կոնկրետ ուղղություններով և կոնկրետ նշված քայլերով.

1. Սովորողի արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

Սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար իրականացվող աշխատանքները նպատակաուղղված են երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց ինքնորոշմանն ու ինքնադրստորմանը, քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացմանը և զարգացմանը: 2022-2023 ուստարում սովորողի արժեքային համակարգի ձևավորման նպատակով ծրագրվում է աշխատանքներ կատարել հետևյալ կոնկրետ ուղղություններով և կոնկրետ նշված քայլերով.

Դաստիարակել անհատ, որը՝

1. Լինի մարդասեր, ազնիվ, պատասխանատվության զգացումով օժտված մարդ: Այդ նպատակով դասղեկի ժամերին պարբերաբար իրականացվում են համապատասխան թեմաներով զրույցներ, կազմակերպվում են քննարկումներ:

2. Ճանաչի իր հայրենիքը, իմանա իր ժողովրդի պատմությունը, լինի հայրենասեր, պատրաստակամություն դրսևորի հայրենիքին ծառայելու գործում: Այս նպատակով կազմակերպվում են հայրենասիրական թեմաներով դասախոսություններ, զրույցներ, հանդիպումներ արցախյան պատերազմի մասնակից ազատամարտիկների և հայոց բանակի սպաների հետ, ֆիլմերի դիտումներ, քննարկումներ, ճանաչողական այցեր:

3. Լինի ազգային ավանդույթների, համամարդկային արժեքների կրողն ու փոխանցողը, կարևորի մայրենի լեզվի անադարտության պահպանումը և ճանաչի մշակութային արժեքները: Այս նպատակով կազմակերպվում են համապատասխան թեմաներով զրույցներ, քննարկումներ, ճանաչողական այցեր և այցելություններ տարբեր մշակութային օջախներ:

4. Լինի հոգեպես և ֆիզիկապես առողջ, իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները: Այս նպատակով կազմակերպվում են սեմինարներ, դպրոցի բուժ.աշխատողի, բժիշկ ծնողների մասնակցությամբ համապատասխան թեմաներով զրույցներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով համավարակներին:

5. Ունակ լինի իր նախասիրություններին, հետաքրքրություններին և հակումներին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրելու: Այս նպատակով դասղեկի ժամերին անցկացվում են զրույցներ, կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ: Նախատեսվում է իրականացնել այցելություններ բուհեր և հանդիպումներ բուհերի ներկայացուցիչների հետ:

6. Լինի պետության, հասարակության և շրջակա միջավայրի լիիրավ մասնիկն ու պաշտպանը: Այս նպատակով կազմակերպվում են սեմինարներ, կյոբ-սեղան քննարկումներ:

7. Իմանա իր իրավունքները և պարտականությունները, լինի օրինապահ, ընտրություն կատարելու և իր ձայնի իրավունքը կիրառելու ունակ քաղաքացի: Այս նպատակով սովորողները ծանոթանում են իրենց իրավունքներին և պարտականություններին, կազմակերպվում են հանդիպումներ, զրույցներ:

Ուսումնական աշխատանքի կազմակերպում

2022-2023 ուստարում տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալների աշխատանքը կազմակերպվում է հետևյալ ուղղություններով.

- ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի հսկողություն գրավոր աշխատանքների անցկացման, հաճախումների ամենժամյա հաշվառման միջոցով, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում՝ 2022-2023 ուստարվա օրինակելի ուսումնական պլանին և դպրոցի ուսումնական պլանին համապատասխան.

- դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարում դպրոցի տնօրենի հետ համատեղ, մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացը կազմակերպելու պարագայում ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաների յուրացման, կիրառման, դիդակտիկ նյութերի պատրաստման և տրամադրման, մանկավարժական համագործակցային տեխնոլոգիաների կիրառման գործում.

- առարկայական մեթոդական միավորման (մասնագիտական խմբի) աշխատանքների ղեկավարում, մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձի տարածում, գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին ուսուցիչների իրազեկում.

- սովորողների ուսումնական պարապմունքների հսկողություն, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ առաջարկություններ, մասնավորապես գնահատման չափանիշների արդյունավետ կիրառում՝ կրթության որակի բարելավման նպատակով.

- կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարման ամենօրյա հսկողություն:

Դպրոցի 2022-2023 ուստարվա աշխատանքների օրացուցային պլան

Կազմակերպչական աշխատանքների օրացուցային պլան

№ / №	Աշխատանքի անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու անձը	Կատարողները	Նշումներ կատարման մասին	Ծանոթություն
	2	3	4	5	6	7
1.	Ուսուցիչների ֆյուրոգրաֆիկ հետազոտության կազմակերպում	Մինչև օգոստոսի վերջ	Դպրոցի բուժքույր	Մանկավարժ. աշխատողներ		
2.	2023 թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում	01.09.2021 - 20.09.2022	Դպրոցի տնօրեն	Տնօրեն, գլխ. հաշվ. Մ. Կոստանյան		
3.	Տարեսկզբի նախապատրաստական աշխատանքներ (գույքի և շենքի նախապատրաստում, միջոցառում և այլն)	Մինչև օգոստոսի վերջ	Դպրոցի տնօրեն	Տնօրենի տեղակալներ, մանկ. կու. անդամներ		
4.	Ապահովել դասասենյակների մաքրությունը:	23.08-30.09	Տնօրենի՝ մասն.կրթ. աջակց. գծով տեղակալ	Տնօրենի՝ տնտ. աշխ. գծով տեղ. Դասղեկներ		
5.	Նորոգել ֆիզիկապես մաշված աշակերտական սեղաններ՝ պայմանավորված սովորողների թվի աճով	23.08-30.09	Տնօրենի՝ տնտ. աշխ. գծով տեղակալ	Ուսումնաօժանդակ աշխատողներ		
6.	Կազմակերպել դասագրքեր ստանալու, սովորողներին բաշխելու գործընթացը՝ անվճար դասագրքերով ապահովելով հատուկ կարիք ունեցող սովորողներին:	25.08-30.09.20	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, գրադարանավար		
7.	Ստեղծել տարիֆիկացիոն հանձնաժողով, կազմակերպել 1-ին կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների կազմման աշխատանքները՝ դպրոցի խորհրդի հավանությանը և լիազորմարմնի հաստատմանը ներկայացնելու համար:	25.08-01.09	Կ. Հովակիմյան	Մ. Կոստանյան Մ.Օզանեզովա Ն. Մինասյան Մ.Հովհաննիսյան		
8.	Կազմակերպել դպրոցի պաշտոնական կայքէջի աշխատանքները	Ուստարվա ընթացքում	Ա. Պետրոսյան	Ա. Պետրոսյան Հ. Ասկիջյան Մել.Օզանեզովա		

9.	Կազմակերպել 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների կազմման աշխատանքները դպրոցի խորհրդի հավանությանը և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելու համար:	26.12-30.12	Կ. Հովակիմյան	Մ. Կոստանյան Մ.Օզանեզովա Ն. Մինասյան Մ.Հովհաննիսյան		
10.	Պետական ավարտական քննությունների կազմակերպում	Դեկտեմբեր-Հունվար	Դպրոցի տնօրեն	Տնօրենի տեղակալներ		
11.	Կազմակերպել և վերահսկել քննական կենտրոնի քննասենյակների կահավորման և նախապատրաստման գործընթացը:	20.12-24.12	Մ.Օզանեզովա	Մ.Օզանեզովա Ն. Մինասյան Հ. Ասկիջյան Ա.Պետրոսյան Ա.Ղուկասյան		
12.	Հանրապետական օլիմպիադայի կազմակերպում (կենսաբանություն)	Մարտ-ապրիլ 2023թ.	Դպրոցի տնօրեն	Տնօրենի տեղ. - ներ, մանկ. կոլ. անդամներ		
13.	«Ես բնագետ եմ» հանրապետական աշակերտական համաժողովի կազմակերպում	Մայիս	Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալ Ա. Պետրոսյան	Բնագիտական առրկանների մ/մ, սովորողներ		
14.	Կազմակերպել և վերահսկել քննական կենտրոնի քննասենյակների կահավորման և նախապատրաստման գործընթացը:	22.05-26.05	Մ.Օզանեզովա	Մ.Օզանեզովա Ն. Մինասյան Հ. Ասկիջյան Ա.Պետրոսյան Ա.Ղուկասյան		
15.	Ավարտական, պետական ավարտական և փոխադրական քննությունների կազմակերպում	Մայիս-հունիս 2023թ.	Դպրոցի տնօրեն	Տնօրենի տեղակալներ, մանկ. կոլ. անդամներ		

Դպրոցի 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների օրացուցային պլան

№/ №	Աշխատանքի անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխան ատու անձ	Կատարողներ	Նշումն եր կատար - ման մասին	Ծանոթ ություն
1	2	3	4	5	6	7
1.	Կազմել և մանկ.խորհրդի քննարկմանը ներկայացնել մանկավարժական խորհրդի կանոնադրության և նիստերի օրակարգի նախագծերը:	22.08-30.08	Կ.Հովակիմյան	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Ա. Պետրոսյան Հ. Ասկիջյան		
2.	Կազմել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի նախագիծը:	22.08-30.08	Մ.Օգանեզովա	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Ա. Պետրոսյան Հ. Ասկիջյան Մեթոդմիավոր- րումների ղեկավարներ		
3.	Մանկ.խորհրդի քննարկմանը ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի նախագիծը, մանկ. խորհրդի որոշման նախագիծը՝ պլանը տնօրենի հաստատմանը ներկայացնելու մասին:	30. 08	Մ.Օգանեզովա	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Հ. Ասկիջյան Ա.Պետրոսյան		
4.	Կազմակերպել և անցկացնել աշնանային ստուգումները և արդյունքներն ամփոփել մանկավարժական խորհրդի 23.08-26.08 նիստում :	23.08-26.08	Կ.Հովակիմյան	Մ.Օգանեզովա		
5.	Ապահովել ուսուցիչներին առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ:	23.08-31.08	Ա.Պետրոսյան	Մեթոդմիավորու մների ղեկավարներ		
6.	Կազմակերպել և ծրագրել մեթոդմիավորումների աշխատանքը:	25.08-30.08	Մ.Օգանեզովա Ա.Պետրոսյան Ն. Մինասյան	Մեթոդմիավորու մների ղեկավարներ		
7.	Մեթոդմիավորումների ղեկավարների հետ քննարկել ուս. պլանում և ծրագրերում կատարված փոփոխություն- ները և խնդիրները, տալ առաջարկություններ:	25.08-30.08	Մ.Օգանեզովա Ա.Պետրոսյան Ն. Մինասյան	Մ/միավորման ղեկավարներ,		

8.	Բաշխել օր. ուս. պլանով նախատեսված դպ. բաղադրիչի ժամերը՝ ըստ մ/մ առաջարկների, կազմել դպրոցի ուս. պլանը և դասաբաշխումը մ/մ առաջարկների հիման վրա, ներկայացնել մանկ. խորհրդի քննարկմանը և հաստատմանը:	30. 08	Մ.Օգանեզովա	Մեթոդախնամների ղեկավարներ, Մ.Օգանեզովա		
9.	Կազմել և մանկավարժական խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել ավագ դպրոցում հոսքերի ձևավորման մասին զեկուցում:	25.08-30.08	Կ.Հովակիմյան	Մ.Օգանեզովա		
10.	ա) Կազմակերպել և վերահսկել դասագրքեր ստանալու, սովորողներին բաշխելու գործընթացը՝ պահպանելով անվտանգության կանոնները: Անվճար դասագրքերով ապահովել հատուկ կարիք ունեցող սովորողներին: բ) Հրավիրել դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստ՝ սոցիալապես անապահով սովորողների ցանկը հաստատելու համար	25.08.-30.08 19. 09-26. 09	Կ. Հովակիմյան Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, գրադարանավար		
11.	Կազմել դպրոցի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները՝ դպրոցի խորհրդի հավանությանը և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելու համար:	25.08-01.09	Կ.Հովակիմյան	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Հ. Ասկիջյան Ա.Պետրոսյան, տարիֆիկացիոն հանձնաժողով		
12.	Կազմել 2022-2023 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:	26.08-31.08	Մ.Օգանեզովա	Մ. Օգանեզովա Ն. Մինասյան		
13.	Մանկավարժական խորհրդի նիստ հ.1	30.08.2022	Կ.Հովակիմյան	Մանկավարժական խորհուրդ		
14.	Կազմակերպել 1 կամ 2 անբավարար գնահատականով հաջորդ դասարան փոխադրված սովորողների՝ վերաքննություններին գործընթացը ըստ առարկաների	Մեպտեմբեր-դեկտեմբեր	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Ա. Պետրոսյան	Մեթոդախնամների ղեկավարներ, առարկաների ուսուցիչներ		

15.	Կազմել առարկայական նոր չափորոշիչների, ծրագրերի և ուսուցման կոլեկտիվ եղանակի մանկավարժական տեխնոլոգիաների, դիդակտիկայի համապատասխանության վերաբերյալ քննարկում-ռեֆլեքսիաների ժամանակացույց՝ ըստ առարկաների	Մինչև հոկտեմբերի 1-ը	Ա. Պետրոսյան	Ա. Պետրոսյան		
16.	Կազակերպել առարկայական նոր չափորոշիչների, ծրագրերի և ուսուցման կոլեկտիվ եղանակի մանկավարժական տեխնոլոգիաների, դիդակտիկայի համապատասխանության վերաբերյալ առարկայական քննարկում-ռեֆլեքսիաներ՝ ըստ ժամանակացույցի	Յուրաքանչյուր ամսվա 2-րդ և 4-րդ շաբաթվա ուրբաթ օրը	Ա. Պետրոսյան	Մեթոդափափորումների ղեկավարներ, առարկաների ուսուցիչներ		
17.	Բացահայտել և բացառել ռիսկային խմբի սովորողների մուտքը դպրոց	Յուրաքանչյուր օր	Կ. Հովակիմյան	Դպրոցի աշխատակազմ, բուժքույր		
18.	Կազմակերպել բարձր ջերմություն ունեցող սովորողների մեկուսացումը դրա համար հատկացված սենյակում՝ պահպանելով սոցիալական հեռավորությունը և այդ մասին տեղյակ պահելով ծնողին կամ օրինական ներկայացուցչին և տարածքը սպասարկող կամ կցագրված բժշկական կազմակերպությանը:	Յուրաքանչյուր օր	Կ. Հովակիմյան	Տնօրենի տեղակալներ Բուժ.աշխատող		
19.	Մշակել և կազմել գրույցների, քննարկումների, բանավեճերի թեմաների ցանկ՝ դասղեկների ժամերին և ռեֆլեքսիաների ժամանակ քննարկելու համար:	23.08-26.08 2022թ.	Տնօրենի՝ մասն.կրթ.աջակց . գծով տեղակալ	Դասղեկներ		
20.	Մշակել տեղեկատվություն 2021-2022 ուստարվա շրջանավարտների զբաղվածության մասին:	24.08-30.08 2022թ.	Տնօրենի՝ մասն.կրթ.աջակց գծով տեղակալ	Դասղեկներ		
21.	Կազմել դպրոցի գեղարվեստական-մշակութային միջոցառումների պլան:	Մինչև 30.08.22թ.	Տնօրենի՝ մասն.կրթ.աջակց գծով տեղակալ	Դպրոցի գրադարանավար, մ/մ ղեկավարներ		

22.	Քննարկել և կազմել դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիրը:	մինչև 30.08.22թ	Տնօրենի՝ մասն.կրթ.աջակց գծով տեղակալ	Դասղեկներ		
23.	Կազմել ուսուցչական հերթապահության գրաֆիկ:	մինչև 31.09.22թ	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով.հետ դաստ աշխ. կազմ-իչ		
24.	Հրավիրել դպրոցի սովորողների ծնողների ընդհանուր ժողով:	Մինչև 09.09	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
25.	Կազմակերպել և վերահսկել դասարանների տարեսկզբյան ծնողական ժողովների անցկացումը:	Մինչև 09.09	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
26.	Հրավիրել դպրոցի սովորողների ընդհանուր ժողով՝ համաժողով:	08.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հ. Ասկիջյան		
27.	Կազմել հատուկ ուշադրության կարիք ունեցող/ անապահով, ծնողազուրկ, կարգ., հոգեբ. կամ այլ դժվարություններ ունեցող և այլն/շնորհալի սով-ի ցուցակները:	Մինչև 16.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
28.	Ըստ անհրաժեշտության կազմակերպել աշխատանք կարգապահական, հոգեբանական կամ այլ դժվարություններ ունեցող սովորողների հետ (գրույցներ, անհատական հանդիպումներ ծնողների հետ, ծնողական ժողովներ, առանձին դեպքերում հանդիպում տնօրենի հետ):	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Ուսուցիչներ, դասղեկներ, սով.հետ դաստ աշխ. կազմ-իչ, դպրոցական ավագ տեսուչ		
29.	Հետևել սովորողների ուշացումներին, հագուստի պատշաճությանը, դասերին պատրաստ ներկայանալուն:	Յուրաքանչյուր օր	Տնօրենի տեղակալներ	Ուսուցիչներ, դասղեկներ, սով.հետ դաստ աշխ. կազմ-իչ		
30.	Ապահովել դպրոցի ԾԽ-ի և ԱԽ-ի համագործակցությունը:	1-ին կիս. ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հ.Ասկիջյան		

31.	Կազմակերպել ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ, տեղեկատվական գրույցներ, ինչպես նաև սեմինարներ երեխաների խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, բռնության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ:	Հոկտեմբեր-նոյեմբեր	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հ.Ասկիջյան դասղեկներ, դպրոցի տեսուչ		
32.	Կատարել բացակայությունների հաշվառման ամենօրյա ամփոփում	Յուրաքանչյուր օր	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Ուսուցիչներ, դասղեկներ		
33.	Երկշաբաթյա պարբերականությամբ ամփոփել սովորողների հաճախումների հաշվառումը՝ ըստ յուրաքանչյուր սովորողի: Հաճախակի բացակայող սովորողների ծնողներին գրավոր ծանուցել սովորողի բացակայած ժամերի և օրենսդրությամբ դրան առնչվող իրավական նորմերի մասին:	1-ին կիս. ընթացքում	Մ.Օզանեզովա Ն. Մինասյան Ա. Պետրոսյան	Դասղեկներ		
34.	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները և արդյունքները քննարկել դասղեկների հետ ժողովների ժամանակ:	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օր	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
35.	Կազմավորել դասարանական աշակերտական խորհուրդները:	մինչև 14.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
36.	Կազմավորել դասարանների ծնողական խորհուրդները:	մինչև 14.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
37.	Կազմավորել դպրոցի ծնողական խորհուրդը:	15.09.22թ.- 19.09.22թ.	Տնօրեն	Հ. Ասկիջյան		
38.	Ապահովել դպրոցի ԾԽ-ի և ԱԽ-ի համագործակցությունը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հ.Ասկիջյան, ԾԽ և ԱԽ նախագահներ		

39.	Կազմակերպել ստեղծագործական շարադրությունների մրցույթ՝ «Իմ անկախ Հայաստան» վերնագրով:	12.09-19.09	Ն. Մինասյան Հ. Ասկիջյան	Հայագիտական և օտար լեզուների մ/մ		
40.	Անկախության օրվան նվիրված դպրոցում կազմակերպել դասախոսություններ, քննարկումներ, շարադրությունների մրցույթներ:	12.09-30.09	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, պատմության ուսուցիչներ		
41.	Ծնողական խորհրդի նիստ հ.1:	20.09.22թ.- 26.09.22թ.	Տնօրեն	Հ. Ասկիջյան ԾԽ		
42.	Կազմակերպել դպրոցի աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը:	26.09.22թ.- 03. 10.22թ	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Ընտրական հանձնախումբ		
43.	Ազգային մշակութային ժառանգության պահպանման և զարգացման նպատակով կազմակերպել և վերահսկել սովորողների այցելությունները մշակութային օջախներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ		
44.	Սովորողների ժամանցի և հանգստի նպատակով կազմակերպել հայրենագիտական ճամփորդություններ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ		
45.	Ապահովել սովորողների ընդգրկվածությունը համայնքային, մարզային, հանրապետական, միջազգային տարբեր միջոցառումներին, մրցույթներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ, դասղեկներ		
46.	Դպրոցում մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները համակարգելու նպատակով կազմակերպել հանդիպումներ դպրոցի սովորողների և բուհերի ներկայացուցիչների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Բուհերի ներկայացուցիչ ներ, սով. հետ դաստ աշխ. կազմ., դասղեկներ		

47.	Մասնագիտական կրթական աջակցության նպատակով կազմակերպել դպրոցի տարբեր դասարանների սովորողների այցելությունները կրթական ցուցահանդեսներ և բուհեր, կազմակերպել զրույցներ, քննարկումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ		
48.	Կազմակերպել տարբեր առարկաներից վիկտորինաներ	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	ուսուցիչներ		
49.	Դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ և քննարկումներ հետևյալ թեմաներով՝ 1.«Ծանոթացում դպրոցի ներքին կարգապահական կանոններին» /իրավական դաստ./ 2. «Աշակերտի տեսքը և պահվածքը դպրոցում և այլ հասարակական վայրերում» /հոգե-ֆիզիկական դաստ-ն/ 3. Ճանապարհային երթևեկության կանոններ. «Հետիոտնի և ուղևորի հիմնական պարտականությունները» 4. «Անկախությունն ազգի ազատության արտահայտման ձև, բնականոն իրավունք»: 5.«44-օրյա պատերազմ, նորօրյա հերոսներ»/ֆիլմի դիտում, քննարկում/	01.09.-02.09	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
		05.09.22թ.- 09.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
		12.09.22թ.- 16.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
		19.09.22թ.- 23.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, պատմ-ն ուսուցիչներ		
		26.09.22թ.- 30.09.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
50.	Կազմակերպել բանավեճ «Ինչ տվեց անկախությունը մեզ» թեմայով	20.09-24.09	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հայագիտական մ/մ պատմության ուսուցիչներ		
51.	Կազմակերպել դաս-միջոցառում «Սեպտեմբերի 21-ը, անկախության օր»	Սեպտեմբեր 2022թ.	Ն. Մինասյան, Հ. Ասկիջյան	Հայագիտական մ/մ Ա. Խաչյան		

52.	Կազմակերպել քննարկում. «ՀՀ Սահմանադրություն»	Սեպտեմբեր 2022թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Հայագիտական մ/մ Մ. Խաչատրյան		
53.	Կազմակերպել սեմինար «Սովորողների ինքնավարու թյուն և ժողովրդավարություն» թեմայով	Սեպտեմբեր 2022թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	դասղեկներ, հասարակագիտ. ուսուցիչ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ,		
54.	Իրականացնել դասալսումներ (հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն)	Սեպտեմբեր 2022թ. Հունվար 2023 թ.	Ն. Մինասյան	Առարկաների ուսուցիչներ		
55.	Իրականացնել դասալսումներ (մաթեմատիկա՝ հանրակրթական)	Սեպտեմբեր 2022թ. Հունվար 2023 թ.	Մ. Օգանեզովա	Առարկայի ուսուցիչներ		
56.	Իրականացնել դասալսումներ (ֆիզիկա, քիմիա, կենսաբա- նություն՝ հանրակրթական)	Սեպտեմբեր 2022թ. Հունվար 2023 թ.	Ա. Պետրոսյան	Առարկաների ուսուցիչներ		
57.	Անցկացնել աշակերտական խորհրդի նիստ հ.1	04.10.2022թ	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	ԱԽ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ,		
58.	Կազմակերպել քննարկում «Սովորողների իրավունքներն ու պարտականությունները» թեմայով	Հոկտեմբեր	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ,		
59.	Կազմակերպել և անցկացնել զրույցներ, բանավեճեր, կլոր սեղան քննարկումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկա- կան կամ հոգեբանական ճնշման դեմ, հարգանքի և համագործակցության ձևավորման ուղղությամբ	Հոկտեմբեր, նոյեմբեր 2022թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ, դպրոցական ավագ տեսուչ, ԱԽ		
60.	Դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ և քննարկումներ հետևյալ թեմաներով՝ 1.Ուսուցչի օր. «Ուսուցիչը ժամանակակից սովորողների	03.10.22թ - 07.10.22թ	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		

	աչքերով»/քննարկում/ 2. «Ճանաչենք մեր մայրաքաղաքը» «Էրեբունի բերդաքաղաք»:	10.10. 22թ. - 14. 10. 22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
	3.«Բռնություն, բռնության տեսակները» /հրավական դաստ-ն, քննարկում/	17.10. 22թ.- 21. 10. 22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ, դպր. ավագ տեսուչ		
61.	Կազմակերպել դաս-քննարկում «Ի՞նչ գիտեմ և ի՞նչ սովորեցի Էրեբունի բերդաքաղաքի մասին» թեմայով	Հոկտեմբեր 2022թ.	Ն. Մինասյան Հ. Ասկիջյան	Պատմության ուսուցիչներ, դասղեկներ		
62.	Կազմակերպել դաս- միջոցառում. «Իմ վարդագույն մայրաքաղաք»	Հոկտեմբեր 2022թ.	Ն. Մինասյան, Հ.Ասկիջյան	Պատմության ուսուցիչներ,		
63.	Կազմակերպել սեմինար- քննարկում «Ընտանեկան բռնություն» թեմայով	Հոկտեմբեր 2022թ.	Տնօրենի՝ մասն, կրթ. աջակց. գծով տեղակալ	Հ.Ասկիջյան, դասղեկներ, սով. հետ դաստ աշխ. կազմ-իչ, դպր. ավագ տեսուչ		
64.	Երգիչ, երգահան Շառլ Ազնավուրի հիշատակի օր	01.10.2022թ.	Տնօրենի՝ մասն, կրթ. աջակց. գծով տեղակալ	Գրադարանա- վար		
65.	«Փարաջանովի արվեստը կինոյում և կերպարվեստում». կազմակերպել այցելություն թանգարան, քննարկում	Հոկտեմբեր 2022թ.	Ն. Մինասյան Հ. Ասկիջյան	Հայագիտական մ/մ Մ.Բերբերյան Մ.Խաչատրյան		
66.	Կազմակերպել այց Կարմիր Խաչ. «Սովորել ցուցաբերել առաջին օգնություն»	Հոկտեմբեր 2022թ.	Ա. Պետրոսյան, Հ. Ասկիջյան	Բնագիտական մ/մ Ն.Քոչարյան		
67.	Կազմակերպել սովորողների համար գրույց «Գրքից, գրադարանից օգտվելու էթիկա» թեմայով	Հոկտեմբեր 2022թ.	Տնօրենի՝ մասն, կրթ. աջակց. գծով տեղակալ	Գրադարանա- վար		
68.	Կազմակերպել շաշկու համադպրոցական մրցումներ	Հոկտեմբեր 2022թ.	Մ. Օգանեզովա Հ. Ասկիջյան	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ		
69.	Իրականացնել դասալսումներ (համաշխարհային պատմություն, ռուսաց լեզու)	Հոկտեմբեր 2022թ. Փետրվար 2023թ.	Ն. Մինասյան	Առարկաների ուսուցիչներ		

70.	Իրականացնել դասալսումներ (մաթեմատիկա՝ խորացված)	Հոկտեմբեր 2022թ. Փետրվար 2023թ.	Մ. Օգանեզովա	Առարկաների ուսուցիչներ		
71.	Իրականացնել դասալսումներ (աշխարհագրություն՝ հանրակրթական, ֆիզիկա՝ խորացված՝)	Հոկտեմբեր 2022թ. Փետրվար 2023թ.	Ա. Պետրոսյան	Առարկաների ուսուցիչներ		
72.	Ստուգել էլեկտրոնային մատյանի լրացման գործընթացը	Յուրաքանչյուր ամսվա վերջին օրը	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Ա.Պետրոսյան	ուսուցիչներ		
73.	Կազմակերպել և վերահսկել մ/միավորումների կողմից ուստարվա I քառորդում կատարած աշխատանքների մասին հաշվետվություն կազմելու և տնօրենի հաստատմանը ներկայացնելու գործընթացը:	17.10-21.10	Մ.Օգանեզովա Ն. Մինասյան Ա.Պետրոսյան	Մ/Մ նախագահներ		
74.	Կազմակերպել և վերահսկել դասարանի ղեկավարների կողմից ուստարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվություն կազմելու և տնօրենի հաստատմանը ներկայացնելու գործընթացը	17.10-21.10	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	դասղեկներ		
75.	Կազմել և տնօրենի հաստատմանը ներկայացնել հաշվետվություն ուստարվա I քառորդում կատարած աշխատանքների մասին:	24.10-28.10	Տնօրենի տեղակալներ	Մ.Օգանեզովա Ն.Մինասյան Ա. Պետրոսյան Հ. Ասկիջյան		
76.	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները և արդյունքները քննարկել դասղեկների հետ ժողովի ժամանակ:	28.10.2022թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		
77.	Կազմակերպել ուստարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ամփոփող ծնողական ժողովներ:	31.10.2022թ 04.11.2022թ	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ		

78.	Կազմել և մանկ.խորհրդի քննարկմանը ներկայացնել զեկուցում առ.օլիմպիադաների ներդրոցական փուլը կազմակերպելու մասին	23.10-27.10	Մ.Օզանեզովա	Մեթոդախնամների ղեկավարներ, Մ.Օզանեզովա		
79.	Իրականացնել դասալսումներ (անգլերեն, հասարակագիտություն)	Նոյեմբեր 2022թ. Ապրիլ 2023 թ.	Ն. Մինասյան	Առարկաների ուսուցիչներ		
80.	Իրականացնել դասալսումներ (մաթեմատիկա՝ հարակից)	Նոյեմբեր 2022թ. Ապրիլ 2023 թ.	Մ. Օզանեզովա	Առարկայի ուսուցիչներ		
81.	Իրականացնել դասալսումներ (քիմիա՝ խորացված)	Նոյեմբեր 2022թ. Ապրիլ 2023 թ.	Ա. Պետրոսյան	Առարկայի ուսուցիչներ		
82.	Դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով՝ 1.«Թարգմանչաց տուն», «Խոսենք մաքուր հայերենով», /բարոյ. դաստ-ն/ 2. «Առողջ սնունդ», «Ֆիզիկական ակտիվություն» 3. «Կոնֆլիկտի կառավարում, հարգանք միմյանց նկատմամբ» /բարոյ-ն դաստ-ն, քննարկում/ 4. «Վնասակար սովորույթները և դրանց հետևանքները», «Ծխելը և առողջությունը» /հոգե-ֆիզիկական դաստ-ն, քննարկում/ 5.«Սեռավարակներ, ի՞նչ է ՄԻԱՎ-ը և ՉԻԱՀ-ը», «ՄԻԱՎ-ի, ՉԻԱՀ-ի կան-խարզելման միջոցները»/սեռ-ն դաստ./	31.10.2022թ. 04.11.2022թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, հայոց լեզվի ուսուցիչներ		
		07.11.22թ.- 11.11.22թ.	Տնօրենի՝ մասն. կրթ. աջակց. գծով տեղակալ	Դասղեկներ, դպրոցական ավագ տեսուչ		
